

ԱԼԻՍԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԱՏԱՄԱՐՏԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՌԵՊՈՐՏԱԺՆԵՐՈՒՄ*

*Արցախյան գոյամարտը եղավ Ոգու պոռթկում.
մեր արյան
ավյունը տվեցինք մեր մեծ պայքարին
և հիմա նվիրվել ենք... հոգնության միրվանային:
Մինչդեռ ավելի մեծ գործեր կան առջևում,
որպեսզի մեր հաղթանակն ավարտվի մեզ
արժանավոր ոսկեհուն պսակով:*

Մաքսիմ Հովհաննիսյան

Բանալի բառեր. Արցախյան հերոսամարտ, հրապարակախոս, Մաքսիմ Հովհաննիսյան, հայ ժողովուրդ, հակամարտություն, Ստեփանակերտ, գործողություններ, ճակատագիր, ռեպորտաժ, հայ-ադրբեջանական հակասություններ:

Տասնամյակներ են անցել Արցախյան հերոսամարտից, ինչը եղել է շարունակում է մնալ թե՛ հայ, թե՛ օտարագրի գրողների, պատմաբանների, քաղաքական գործիչների եւ մի շարք այլ բնագավառների ներկայացուցիչների ուշադրության կենտրոնում: Եվ թեեւ նրան նվիրված են բազմաթիվ աշխատություններ, ուսումնասիրություններ, հոդվածներ, գրքեր, հուշագրություններ, վիճակագրական եւ փաստագրական ժողովածուներ, օրագրություններ, կինովավերագրեր, գիրք-հուշամատյաններ, տարեգրություններ, որոնք կարելի էր դնել են խաղում անհրաժեշտ եզրակացություններ անելու համար, այնուամենայնիվ, հայ ժողովրդի համար արյունոտ, սակայն հաղթական եւ ճակատագրական կարելի էր ժամանակաշրջանի ամբողջական իրապատկերն ավարտված համարել դեռեւս չի կարելի, քանի դեռ ասելիք կա, եւ արթուն է մարդկային հիշողությունը: Արցախյան ազատամարտի հերոսների սխրագործությունները ներկայացնելու համար հայ գեղարվեստական արձակի եւ հրապարակախոսության մեջ հայտնվում է ազատամարտիկ-զինվորի նորահայտ ու ինքնատիպ կերպարը: Այն ի տարբերություն Հայրենական մեծ պատերազմին մասնակցած խորհրդային զինվորի գրական կերպարի, դիտարկվում է տարբեր տեսանկյուններից, նոր ու հետաքրքիր երանգներով հարստացնելով արդի հայ արձակի ազգային դիմապատկերը: Հերոսազատամարտիկի կյանքն ու քաջագործությունները, ինչպես նաեւ Արցախյան

*Հոդվածն ընդունվել է 12.03.2018թ:

Հոդվածը տպագրության է երաշխավորել Գրիգոր Նարեկացի համալսարանի գրականության ամբիոնը:

իրադարձությունների ամբողջական պատկերն արձանագրելու նպատակով ծնունդ է առնում վավերագրական արձակը, որտեղ իրենց նպաստն են բերում Հովիկ Վարդումյանը, Վարդգես Բաղդյանը, Նվարդ Սողոմոնյանը, Կոմիտաս Դանիելյանը եւ այլքը: Արցախյան վավերագրությունը որակական իմաստով լավագույնս դրսևորվեց գրող-հրապարակախոս Մ.Հովհաննիսյանի կողմից: Նրա բեղմնավոր գրիչը ազդարարում է արցախյան ազգային-ազատագրական պայքարի հաղթարշավը: Մ. Հովհաննիսյանն իր տաղանդի եւ փորձի շնորհիվ վարպետորեն համադրել է վավերականն ու գեղարվեստականը եւ արդյունքում ստացել ժանրային ձեւափոխված հետաքրքիր մի միասնություն, ինչպես ժամանակին ընդգծվել է «Սովետական գրականության պատմություն» ձեռնարկի 2-րդ հատորում. «Ճեղքելով փաստագրական հավաստիության շրջանակները, ակնարկը վերածնուն է պատմվածքի»: (1)

Մ. Հովհաննիսյանի «Ռեպորտաժ դեպքի վայրից» եւ այլ հրապարակումները լինելով լրագրային ժանրեր, միաժամանակ կարելի է համարել փոքրածավալ պատմվածքներ: Գրող-հրապարակախոսը ներդրել է իր մարդկային ու մասնագիտական ողջ ներուժը եւ հայ ժողովրդի կենսագրության կարեւորագույն էջերից մեկը՝ Արցախյան գոյապայքարի ամբողջական պատկերը հավերժացրել «Ռեպորտաժ դեպքի վայրից» խորագիրը կրող երեք մասից բաղկացած շարքում: Նրա հրապարակախոսական սուր մտքի արգասիքը դարձած Արցախյան գոյամարտի լավագույն վկայականը, ժամանակային ճշգրտությամբ, փաստերի հերթականության ամբողջությամբ հայ ազգի կենսագրության մեջ մեծ արժեք ներկայացնող գործ է՝ պատմական կարեւոր իրադարձությունների անմիջական շարադրանքով ու նկարագրությամբ: Հովհաննիսյանը, լրագրության ժանրային առանձնահատկություններից ելնելով, ժամանակին ու անկողմնակալ ներկայացնում է իրողությունը՝ երբեմն հենց դեպքի վայրից: «Ռեպորտաժ դեպքի վայրից» բաժնի հրապարակումները մեծամասամբ հենց նման բնույթ են կրում: Վերնագրի ընտրությունն իրոք համապատասխանում է շարքի մեջ ներառված գործերի կառուցվածքին:

Գրող-հրապարակախոսի յուրաքանչյուր գործ ընթերցողին օգնում է զգալ իրադարձությունների ողջ ընթացքը, պատկերացնել նրա ողջ խորությունը: Այն արցախյան ազգային-ազատագրական պայքարի, Արցախի ու արցախցիների փաստացի նկարագիրն է, արցախյան գոյապայքարի ժամանակագրությունը, ինչի մասին նշում է նաեւ ինքը՝ հեղինակը: Սակայն այն զուտ փաստագրական շարադրանք չէ: Փաստերը պարուրված են հուզական նկարագրություններով, ինչն արվում է տեղին ու չափի մեջ: Հովհաննիսյանի հրապարակումներում պարզ երեւում է հայ ժողովրդի ցավով տառապող արվեստագետ-քաղաքացին, ուն համար ժամանակի հրամայական գործը սեփական ազգի փրկությունն էր: Ձեռքը, որ նա վերցրեց 88-ին եւ 88-ից առաջ, գրիչն էր, առատ հունձքը՝ մշտապես թարմ, ճշգրիտ, հմտորեն գրված հոդվածները: Հրապարակախոսն անձամբ հայտնվում էր իրադարձությունների կենտրոնում, հետեւում նրանց ընթացքին, մտահոգվում երեւույթների անհաջող դասավորությունից, տխրում ողբերգական երեւույթներից, ուրախանում հաջող արդյունքներով: Նա ակտիվ պայքարում էր իր գրչով: Հրապարակումներում առավել ընդգրկում ու շոշափելի տարածք են գրավում ղարաբաղյան շարժման սկիզբը, ընթացքն ու պայմանական ավարտն ամբողջությամբ, որտեղ հայի լինել-չլինելու խնդիրն էր բարձրաձայնվում: Հրապարակախոսը, ներկայացնելով երկար ու քարքարոտ ճանապարհ անցած հայ ժողովրդի ծանր ճակատագիրն ու հերթական գոյապայքարի դառնությունները, ընդգծում է,

որ Արցախյան ազգային-ազատագրական գոյապայքարը նոր նպատակների, սպասելիքների տարածք էր բացել: Հայ ազգին աշխարհի երեսից վերացնելու եւ «մեկ հայ թողնելու» այն էլ թանգարանում» խելահեղ մարմաջով հարբած, մեր հարեւան թշնամին այս անգամ էլ հային՝ իր սեփական տնից վռնդելու դաժան ու անմարդկային ճանապարհն էր բռնել: Այս անգամ մեկ այլ ժամանակամետ ձեւակերպմամբ՝ «Չկա հայ՝ չկա պորբլեմ»: Ըստ որում, այդ նպատակին հասնելու համար առաջնորդվում էր՝ «ինչքան վատ՝ այնքան լավ» սկզբունքով: «Մեծ փորձության ժամանակը» հրապարակման մեջ հրապարակախոսը պատմության հիմնավոր խորքերից արձանագրում է այն իրողությունը, որ հայն ու ադրբեջանցին աշխարհագրական տարածքի պարտադրանքով պետք է ապրեն իրար հարեւանությամբ, քանի որ ճակատագրով պարտադրված են իրար, եւ սա այն դեպքը չէ, որ եթե հարեւանդ քո սրտովը չէ, կարող ես տունդ փոխել. «Հայրենի հողը աճուրդի չեն հանում», (2) - գրում է նա:

Մ. Հովհաննիսյանն արձանագրում է այն պատմական իրողությունը, որ արցախյան ազգային-ազատագրական շարժման արմատներն իրականում շատ խորն են: Այն սկսվել է 1921 թվականից, երբ Լեւինի եւ Ստալինի կամքով Հայաստանը մեկ անգամ եւս բզկտվեց, Նախիջևանն ու Լեռնային Ղարաբաղը նվիրեցին Ադրբեջանին: «Արդեն իր գոյության արշալույսին,- «Արցախյան գոյամարտ. եղելություններ եւ խոհեր» խորագրի տակ մեկնաբանում է հրապարակախոսը,- համայնավարությունը, վերադասավորելով երկրներ ու ժողովուրդներ, այսպես լուծում էր ազգային հարցը: Այդ զոհասեղանին, թերեւս, Ղարաբաղն առաջին մատաղացուն էր: Ամեն անգամ, երբ փչել է ազատության թեկուզ բեկ-բեկ հովը, անթեղի տակ պահված կրակը նորից բորբոքվել է, եւ մեր ազգային բողոքն ասպարեզ է հանվել»: (3) ճակատագրական պոռթկում տեղի ունեցավ 1965-ին, երբ մի խումբ մտավորականներ ԽՄԿԿ Կենտրոնական կոմիտեին հասցեագրված նամակում, փաստելով Ադրբեջանի իշխանությունների հայակործան քաղաքականությունը՝ որպես ազգային ծրագիր, պահանջեցին Լեռնային Ղարաբաղը վերամիավորել մայր Հայաստանին: Նամակն արտահայտում էր Արցախի հայ ժողովրդի կամքը, եւ շուտով շարժման մեջ են ներքաշվում գյուղեր, քաղաքներ ու շրջաններ:

Ծանր էր եւ ոչ անհետեւանք Բորիս Գեորգովի գործունեության ժամանակաշրջանը, որը «Ղարաբաղյան նացիոնալիզմը» արմատախիլ անելու համար Ստեփանակերտ էր ուղարկվել՝ որպես Ադրբեջանի կոմկուսի Լեռնային Ղարաբաղի մարզկոմի առաջին քարտուղար: Այսպիսով՝ Գեորգովյան 15-ամյա իշխանության տարիներին կուտակված համբերատարությամբ աչքի ընկնող հայ ժողովրդի ցասումը ժայթքում է 1988-ին: Հրապարակախոսը մանրամասն ներկայացնում է 1988-ի փետրվարի կեսերին եւ հետագայում Ստեփանակերտի կենտրոնական հրապարակի եռուն իրավիճակը: Եվ թե ինչպես իրենց համայնքների վերջնական ու հաստատուն կամքն արտահայտելու համար Ստեփանակերտ էին գալիս Արցախի տարբեր քաղաքներից ու գյուղերից պատգամավորներ, որի հետեւանքով էլ փետրվարի 13-ին տեղի է ունենում առաջին հանրահավաքը՝ «ի հեճուկս տեղական իշխանությունների դիմակայության, ի հակադրումն Բաքվից ժամանած բարձրաստիճան բանազնացների»: (4)

Սկսվում է Արցախյան շարժումը: Դեպքերի հետագա ընթացքն անկանխատեսելի էր եւ միաժամանակ ողբերգական իրադարձություններով հագեցած: «Բայց արդյո՞ք՝ անկանխատեսելի: Մի՞թե, իրոք, հետագա արյունալի դեպքերը տարերային էին ծնվում, ինչպես փորձում էր ներկայացնել պաշտոնական կենտրոնը: Թե դրանք հղացվել էին նախօրոք, սառն ուղեղով: Այդ ամենը հստակվեց ուշ եւ ուշացած, երբ ամենն այլեւս տեղի ունեցած էին», - գրում է հրապարակախոսը:

Արցախյան շարժումը գնալով լայնածավալ մասշտաբների է հասնում: Հայ-ադրբեջանական առճակատումը պայքարի քաղաքակիրթ ձևերից անցնում է «բիրտ ուժին», ահաբեկչությանը, սպանություններին: Արցախի հարակից ադրբեջանական շրջաններից հենց Արցախում կազմակերպում են ճանապարհների շրջափակում, ավազակային հարձակումներ՝ հայկական գյուղերի վրա: Այսպես կոչված «ադրբեջանական գործոնը» գործողության մեջ էր դրվում Արցախում: Կարճ ժամանակահատվածում մարզը շրջափակման մեջ է առնվում եւ կտրվում է արտաքին աշխարհից: Փակվում են մարզկենտրոն Ստեփանակերտից Մարտունի, Հադրութ, Մարտակերտ տանող, ինչպես նաեւ Հադրութից շրջանի գյուղեր գնացող այն բոլոր ճանապարհները, որոնք անցնում են Աղդամ, Ֆիզուլի եւ այլ ադրբեջանական շրջաններով: Փակվում են նաեւ մարզի ներսի այն ճանապարհները, որոնք անցնում էին ադրբեջանական բնակավայրերով: Այս ամենի շուրջ «Արցախյան գոյամարտ. եղելություններ եւ խոհեր» հրապարակման մեջ ահա թե ինչ մեկնաբանությամբ է հանդես գալիս Մ. Հովհաննիսյանը. «Դա հնարավոր դարձավ, երբ Արցախ ներմուծվեցին ԽՍՀՄ ներքին գործերի նախարարության զինվորական կազմավորումները: Այդ ուժերը ոչ թե օրինականությունը պահպանելու համար էին ժամանել, ինչպես հայտարարվեց պաշտոնապես, այլ՝ իրականացնելու «կապված հորթին» խրատելու՝ պետականորեն մշակված ծրագիրը: Ղարաբաղյան «վարակը» լոկալացնելու եւ շարժումը վնասագերծելու նպատակին հետամուտ՝ Կենտրոնը դարձավ Ադրբեջանի կամա թե ակամա դաշնակիցը: 1990 թվականին ԼՂԻՄ-ում ու նրան հարակից շրջաններում հայտարարվեց արտակարգ դրություն, արցախյան շարժման վրա ճնշումն ավելի խորացնելու եւ բռնի ուժով մարելու այն: Իսկ առիթը եղան Բաքվի արյունալի դեպքերը: Հերթական անգամ Կենտրոնն Արցախը դարձրեց «քաղության նոխագ»: Այս ժամանակաշրջանի իրական նկարագիրն իր բոլոր նրբությունների, պատճառահետեւանքային կապերի դրական ու բացասական դրսեւորումների մասին մանրամասն մեկնաբանություններն ու դիտարկումներն առավել շոշափելի են Մ. Հովհաննիսյանի «Արցախյան գոյամարտ. եղելություններ եւ խոհեր», «Նամակ Աշխեն Պետրոսյանին», «Սկզբում եղել է բանը», «Մեր նոյեմբերի 7-ը», «Ով պետք է կանգնի ժողովրդական դատի առջեւ» եւ մի շարք այլ հրապարակումներում: «Նամակ Աշխեն Պետրոսյանին» հրապարակման մեջ Մ. Հովհաննիսյանը գրում է. «Այս տարվա անցած ամիսների դաժան ու հետեւողական ճնշումները, որ ձեռնարկում էր Ադրբեջանի ղեկավարությունն արցախահայության նկատմամբ, իր նախադեպը չունեն խորհրդային իշխանության բոլոր ժամանակներում՝ նույնիսկ ավիւյան ժամանակների համեմատությամբ: Խտրականության, տնտեսական ու քաղաքական ճնշման, արտակարգ դրության պայմաններում մարզ մուծված զինվորական ուժի լայն օգտագործման միջոցով Ադրբեջանի ղեկավարությունը փորձում է ստեղծել նախիջեւանյան սինդրոմը, խախտել մարզի ժողովրդագրական կազմը: Արցախը նրանց համար «տերունական հող» է, որ ժառանգել են բեկական-ֆեոդալական ինչ-որ արտոնագրով»: (5)

«Մեր նոյեմբերի 7-ը» հրապարակման մեջ էլ հրապարակախոսը «բորբոքված ուղեղով» «կոկորդուս նկատված հարցականների» պատասխաններն է ուզում ստանալ. «Արտակարգ դրության անձուկ նեղվածքներում, շրջափակման ոսկրոտ ճիրաններում մենք պատասխան ենք ողորում՝ տվե՞ք մեզ ապրելու, մեր հողը հերկելու, մեր երեխաներին փայփայելու, մեր սիրեցյալներին սիրելու պարզագույն իրավունքը: Տվե՞ք մեզ մարդկության հնարած «մարդու իրավունքները»:

Տվե՛ք մեզ Արդարությունը, որպեսզի նրանով դատվեն սպանություն, ավերում, լլկում: Սումգայիթում, Բաքվում, մեր ճանապարհների վրա, մեր հնձանի կողքին, արտի մեջ, մեր օջախում: Տվե՛ք մեզ Հավասարություն, որ զորավոր այլ ազգերի պես մեր ճակատագիրը, մեր ապագան ինքներս տնօրինենք: Որպեսզի առաջնորդի հռչակած ազգերի ինքնորոշման իրավունքը լինի կարգ եւ ոչ թե մերկ շեքին դրված թգեմու տերեւ: Հավասար լինենք իրար նկատմամբ ու պատմության առջեւ»: (6) Այնուհետեւ հրապարակախոսն արձանագրում է այն տխուր իրողությունը, որ գործարանները հույս չէինելու պատճառով կանգնել են, ճանապարհները երթելեկ չէինելու հետեւանքով փակվել են, սերմնացանը հողը ցանելու հնար չէինելու պատճառով մնացել է վիզը ծուռ կանգնած, պատն էլ մնացել է կիսատ՝ տունը կառուցելու հնար չկա: «Սինչդեռ կարգախոսը ի լուր աշխարհի հռչակել էր՝ գործարանները՝ բանվորներին, հողը գյուղացուն, փառքը՝ աշխատավորին: Փուստ, փուստ, փուստ... Վերակառուցման՝ մարզում իրականացվող այս դարբուդարաղը դարձել է պետական քաղաքականություն», (7) - պարզաբանում է Մ. Հովհաննիսյանը: Իսկ «Ո՞վ պետք է կանգնի ժողովրդական դատի առջեւ» խորագիրը կրող հրապարակման մեջ հեղինակը վառված Ծաղկածորի՝ իր իսկ տանը սպանված 83-ամյա ծեր կնոջ, ջահել-ջիվանների սպանության եւ այլ ողբերգական երեւույթների մասին հիշատակելով՝ ներկայացնում է արցախահայության միամտության հասնող այն հույսն ու հավատը, որ արտակարգ դրության ռեժիմը կարող է կայունացնել իրավիճակը:

«Սկիլլայի եւ Խարիբդիսի արանքում» հրապարակման մեջ ահա թե ինչ մեկնաբանությամբ ու եզրահանգումներով է հանդես գալիս հրապարակախոսը. «Արտակարգ դրությունը հնարվեց որպես քաղաքական զենք՝ անենթակա պրոբլեմներին ուժային լուծում տալու համար: ԽՍՀՄ երկրի լայնածավալ տարածքից պոլիգոն ընտրվեց քարտեզի վրա մի ասեղաչափ ՀԿՕ-ն: Ձինամթերք կա՝ չգիտեմ որտեղ հայտնագործված, բայց առաջինը Ադրբեջանում կիրառված շրջափակումը՝ տնտեսական, քաղաքական, զաղափարական՝ առանձին-առանձին կամ ցանկացած կոմբինացիայով: Իրենց ուժը դեռ չեն կորցրել երեսնական թվականներին լայնորեն կիրառված շանտաժը, պրովոկացիան, ռեպրեսիան: Դրան զուամարած՝ ցեղակից օսմանների գինապաշարը: Մի հսկայական կայսրություն մի փոքրիկ երկրամասի մսին է դառել, Նախիջևանի սինդրոմն ուզում են սածիլել Արցախի հողում»: (8) Այս շրջանում Արցախն ամբողջությամբ գտնվում է շրջափակման մեջ: Ձինված ադրբեջանցիներն իրավապահ մարմինների աջքի առաջ «հարավ-հրոցով», հրացանային կրակոցներով ավազակային հարձակումներ են ձեռնարկում հայկական բնակավայրերի վրա, թալանում ու ավերում: Մարդիկ, ստեղծված իրավիճակից ելք չգտնելով, հուսահատ թողնում-հեռանում են հայրենի գյուղերից: Անասնազոհությունն Ադրբեջանի պետական քաղաքականության մասը կազմելով՝ մի քանի ամսում անասելի չափերի է հասնում: «Նույնիսկ Հայրենական պատերազմի տարիներին, - «Գործ անելու ժամանակը» հրապարակման մեջ գրում է Մ. Հովհաննիսյանը, - երբ մեր ծնակներում վխտում էին ռազմաճակատը լքած ոչ մեր «ղաչաղները», անասնազոհությունն այսքան չէր հեշտացել: Առանց համարի ավտոմեքենաները վխտում են ձորակում: Եվ այդ ամենն արվում է մեր պետությունն իրավական պետություն դարձնելու կուսակցական-պետական ջանքերի մեր օրերում»: (9) 1990-91թթ. ԼՂԻՄ պետական եւ կոլեկտիվ տնտեսություններից բաշվել է ավելի քան 12 հազար խոշոր եղջերավոր անասուն: Պարետության քթի տակ եւ աչքի առաջ հրդեհվում էին արտերը, թալանվում դաշտային կայանները: Արցախն արտաքին աշխարհի հետ կապված էր միայն օդային ճանապարհով, որտեղ արդեն տեր ու տնօրեն էր դարձել ադրբեջանական օմոնը: Քրեական անցյալ ունեցող օմոնականները ծաղր ու ծանակի էին եւնթարկում հայ ուղեւորներին, առանց դատ ու դատաստանի ծեծում, թալանում, փոքր ինչ դիմադրության դեպքում՝ բանտարկում: «Ռեզուս կոնֆլիկտ, թե՛ ռեզուս համաձայնություն» վերնագրի տակ Մ. Հովհաննիսյանը խոսում է այն մա-

սին, որ առաջին անգամ չէ աղբբեջանական բնակավայրում տեղադրված զինված միավորումների օգնությամբ կազմակերպվող բռնությունները, սադրանքները, շիկացված քաղաքական մթնոլորտը, ինչպես նաեւ ծխածածկույթի տակ մարդ մտցված այն ուժերը, որոնց նպատակն է ահաբեկչությամբ ու բռնությամբ խեղդել արցախահայության ազգային իրավունքների համար պայքարը: Եվ ապա արձանագրում մարզում ստեղծված երկու զուգահեռ կառուցվածքների՝ պարետության եւ օմօնի առկայությունը, նշում է, որ վերջինիս ավելանում է «Աղբբեջանի ՆԳՆ միլիցիայի կոնտինգենտը»: «Սումգայիթ՝ նշանակում է ցեղասպանություն» հրապարակման մեջ էլ հրապարակախոսն արձանագրելով Աղբբեջանի Հանրապետության ղեկավար շրջանների որոշակի ազդեցիկ ուժերի կողմից արցախահայությանը ծնկի բերելու նորանոր միջոցների հնարման փաստը՝ ընդգծում է, որ խախտելով երկրի սահմանադրական օրենքները՝ Աղբբեջանի Գերագույն խորհուրդը լուծարում է Արցախի բոլոր մակարդակի խորհուրդները: Իսկ Աղբբեջանի կոմկուսի Կենտկոմի բյուրոն դադարեցնում է կուսակցության շրջկոմների գործունեությունը (բացառությամբ՝ Շուշիի): Քաղաքական այդ ոտնձգությունների նպատակը թերեւս կառավարման եւ կուսակցական բոլոր կառուցվածքների կազմալուծման, ժողովրդին ղեկավար մարմիններից զրկելու, արցախյան շարժումն այդպիսով ջլատելու մեջ էր կայանում: Ահա թե ինչ մեկնաբանություն է տալիս հրապարակախոսը. «Այսօր Արցախում, Կենտրոնի թողտվությամբ, իրականացվում է արցախահայության ցեղասպանություն: Սակայն այդ հրեշավոր ծրագիրը կրողները ճակատագրական սխալ են թույլ տալիս՝ Արցախը հայ ոգու հավերժական գոյատեւման սիմվոլն է: Այդպես եղել է դարեր շարունակ, այդպես է հիմա»: (10) 1991-ի վերջերից ռազմական գործողություններ ծավալվեցին Արցախի ամբողջ տարածքում: 1992 թվականն ամենաարյունալին էր մեր գոյապայքարի տարեգրության մեջ: Թշնամին գերազանցում էր մարտական տեսնիկայով եւ գործերի թվաքանակով: Նրա զինյալ «հրոսակախմբերն ասպատակում էին» Արցախի բնակավայրերը, տարբեր տրամաչափի հրազենից երկաթե հեղեղ թափում քաղաքների եւ գյուղերի վրա, ավերում շենքեր, սպանում խաղաղ քաղաքացիների: Առանձնապես ծանր էր Ստեփանակերտի վիճակը, հատկապես, երբ քաղաքը սկսեցին հրթիռակոծել «գրադ» կայանքներից եւ փլատակների վերածել տասնյակ բնակելի շենքեր, արդյունաբերական ձեռնարկություններ, իսկ խաղաղ բնակչությունը, վերջնականապես քուն ու հանգիստ կորցրած, վախի ու սարսափի մեջ ամեն օր գոհեր էր ունենում: Շուշիից եւ շրջակա աղբբեջանական բնակավայրերից ամեն կերպ ձգտում էին Ստեփանակերտը՝ որպես Արցախի ազատագրական պայքարի միջնաբերդ, ավերակի վերածել, ճնշել նրա ազատատենչ ոգին: Հայերն այլընտրանք չունեին՝ թշնամուն պետք է դուրս վճռեին իրենց հայրենի բնօրրանից: Տասնյակ քաջազուն հայորդիներ, զոհելով իրենց կյանքը, ազատագրում են Կրկժանը, Մալիբեկլուն, Խոջալուն, իսկ մայիսի 9-ին 70-ամյա գերությունից հետո ազատագրվում է նաեւ Շուշին: «Մայիսի 18-ին իրականացվում է արցախահայության մեկ ուրիշ երազանքը՝ ԼՂՀ-ն Լաչինի պորտալարով միանում է մայր Հայաստանին, գրում է հրապարակախոսը: Դա աստեղային ժամն է Արցախի գոյապայքարի պատմության մեջ: Այդ օրը տողերիս հեղինակը մարտի տաք հետքերով անցավ Լաչինի միջանցքով: Հիշում եմ միջանցքը մաքրող ազատամարտիկներից մեկի խոսքերը. «Այլեւս պետք է դադարեցվի ֆիդայական կռիվը, պետք է ստեղծել կանոնավոր բանակ: Ավաղ, այն ժամանակ դա տեղի չունեցավ, ավելին՝ հաղթանակը բթացրեց մեր մարտական ոգին, մենք չկարողացանք ծավալել հաջողությունները»: (11)

Հաջողությունների ու անհաջողությունների, ոգու անկման եւ ոգեշնչումների աննախադեպ պայքարի հետագա ընթացքն ամենայն մանրամասնությամբ տեղ է գտնում գրող- հրապարակախոսի տողերում: Հայոց ազգային բանակի ստեղծման գաղափարն իրագործվում է 1992–1993թթ.՝ երկրապահ կամավորական ջոկատների եւ բանակ զորակոչված զինակոչիկների միասնական ուժերով: Հայ ազգը, մոտ 20-25 հազարանոց բանակով դուրս գալով Աղբբեջանի 75-80 հազա-

րանոց բանակի դեմ, հերոսաբար հետ է շարտում թշնամու գրոհը եւ ազատագրում Արցախը: 1994 թվականի մայիսի 12-ին կնքվում է զինադադար: Արդյունքում՝ հայերն ունենում են 5 հազար զոհ, ինչպես նաեւ՝ հազարավոր զոհեր՝ խաղաղ բնակչության շրջանում:

Լեռնային Ղարաբաղի դեմ Ադրբեջանի Հանրապետության ագրեսիայի հետեւանքով ծագած զինված հակամարտությունը՝ 1988–1994թթ., իր փուլային բոլոր ընդգրկումներով տեղ է գտնում Մաքսիմ Հովհաննիսյանի հրապարակախոսական մտքի դիտակետում՝ տարածաշրջանային եւ միջազգային զարգացումների, ներքին ու արտաքին քաղաքական դրսեւորումների ընդհանրությամբ: Անկախ նրանից, թե փուլային ինչ համակարգով արժե առաջնորդվել, գրող-հրապարակախոսն ամենայն մանրամասնությամբ, անկողմնակալ շարադրանքով ու մեկնաբանությամբ արձանագրել է հակամարտության ամբողջ անցուդարձը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Սովետահայ գրականության պատմություն», 2-րդ հատոր, 1965 թ., Երեւան, էջ 45:
2. Հովհաննիսյան Մ., Երկեր, Երրորդ հատոր, Ստեփանակերտ, «Վաչագան Բարեպաշտ» հրատ., «Սոնա» գրատուն, 2008 թ., էջ 187:
3. Նույն տեղում, էջ 243:
4. Նույն տեղում, էջ 244:
5. Նույն տեղում, էջ 371-372:
6. Նույն տեղում, էջ 412 :
7. Նույն տեղում, էջ 412:
8. Հովհաննիսյան Մ., Երկեր, Երկրորդ հատոր, Ստեփանակերտ, «Վաչագան Բարեպաշտ» հրատ., «Սոնա» գրատուն, 2006 թ., էջ 357:
9. Նույն տեղում, էջ 312:
10. Նույն տեղում, էջ 436:
11. Նույն տեղում, էջ 436:

ԱՄՓՈՓՈՒՄ

ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԱՏԱՄԱՐՏԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՌԵՊՈՐՏԱԺՆԵՐՈՒՄ

ԱԼԻՍԱ ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ

Տասնամյակներ են անցել Արցախյան հերոսամարտից, ինչը եղել եւ շարունակում է մնալ թե՛ հայ, թե՛ օտարազգի գրողների, պատմաբանների, քաղաքական գործիչների եւ մի շարք այլ բնագավառների ներկայացուցիչների ուշադրության կենտրոնում: Արցախյան վավերագրությունը որակական իմաստով լավագույնս դրսեւորվեց գրող-հրապարակախոս Մ. Հովհաննիսյանի կողմից: Հայ ժողովրդի պատմության կարեւորագույն էջերից մեկի՝ 20-րդ դարի Արցախյան գոյապայքարի արձանագրման գործում Հովհաննիսյանի ավանդը մեծ է «Ռեպորտաժ դեպքի վայրից» երեք բաժնից բաղկացած շարքում եւ այլ հրապարակումներում:

Լեռնային Ղարաբաղի դեմ Ադրբեջանի Հանրապետության ագրեսիայի հետեւանքով ծագած զինված հակամարտությունը՝ 1988–1994թթ., իր փուլային բոլոր ընդգրկումներով տեղ է գտել Մաքսիմ Հովհաննիսյանի հրապարակախոսական մտքի դիտակետում՝ տարածաշրջանային եւ միջազգային զարգացումների, ներքին ու արտաքին քաղաքական դրսեւորումների ընդհանրությամբ:

РЕЗЮМЕ

ОТОБРАЖЕНИЕ АРЦАХСКОЙ НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНОЙ
БОРЬБЫ В РЕПОРТАЖЕ М. ОВАННИСЯНА

АЛИСА БАГДАСАРЯН

Ключевые слова: Арцахская героическая борьба, публицист, Максим Ованнисян, армянский народ, противоборство, Степанакерт, действия, судьба, репортаж, армяно-азербайджанское противостояние.

Прошли десятилетия со времени начала Арцахской героической борьбы, которая была и продолжает оставаться в центре внимания как армянских, так и зарубежных писателей, историков, политических деятелей и ряда представителей других сфер. В качественном плане арцахская документалистика проявилась в лучшем виде у писателя-публициста у М. Ованнисяна. Вклад Ованнисяна в освещение одной из важнейших страниц истории армянского народа – Арцахской освободительной борьбы 20 века велик в цикле "Репортаж с места происшествия", состоящем из трех частей, и в других публикациях.

Все этапы вооруженного противостояния 1988-1994 гг., возникшего вследствие агрессии Азербайджанской республики против НКР, нашли отражение в публицистической мысли М. Ованнисяна: в комплексе региональных и международных развитий, проявлений внутренней и внешней политики.

SUMMARY

THE REFLECTION OF ARTSAKH WAR OF INDEPENDENCE IN
M. HOVHANNISYAN'S REPORTS

ALISA BAGHDASARYAN

Keywords: Artsakh heroic battle, publicist, Maxim Hovhannisyan, Armenians, antagonism, Stepanakert, actions, fate, reporting, Armenian-Azerbaijani antagonism.

Decades have passed after Artsakh war which was and still remains on the focus of the Armenian and foreign writers, historians, politicians and representatives of many other spheres. The Artsakhi documentary was best expressed by writer-publicist M. Hovhannisyan in terms of its qualitative peculiarities.

Hovhannisyan's contribution to recording one of the most prominent pages of the history of the Armenian people in the 20th century the struggle for survival in Artsakh is great both in the three-part series "Reports from the scene" and in other publications. The armed conflict arising from the aggression of the Republic of Azerbaijan against Nagorno-Karabakh in 1988-1994 with its stage-by-stage coverage is included in the view stand of Hovhannisyan's public opinion with generalizing the regional and international developments, inner and foreign political manifestations.